**ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝**
**12.09.2024թ. նիստի N 1 արձանագրություն**

Օրակարգ

1. Անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատում:
2. Ֆակուլտետի գիտխորհրդի 2024-2025 ուսումնական տարվա աշխատանքային պլանի հաստատում:
3. Ընթացիկ հարցեր:

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի դեկան Գ. Բարսեղյանը ողջունեց և շնորհավորեց գործընկերներին նոր ուսումնական տարվա կապակցությամբ: Նիստին 36 անդամներից ներկա էին 24-ը:

Գ․Բարսեղյանը անդրադարձավ օրակարգի առաջին հարցին՝ անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատմանը:

ԼՍԵՑԻՆ՝ ԵԼՀ ֆակուլտետի անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատման հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Միաձայն քվեարկության արդյունքում որոշվեց ընթացիկ ուսումնական տարվա առաջին կիսամյակում հետևյալ ուսանողներին առաջադրել անվանական կրթաթոշակի:

1. Զաքարյան Անգելինա Մանվելի - «Լեզվաբանություն» մասնագիտություն, «Անգլերեն լեզու, իտալերեն լեզու և հաղորդակցություն» բակալավրի կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի (Վ. Սարոյանի անվան կրթաթոշակ):
2. Պոյաճյան Վանա Ռաֆֆիի - «Լեզվաբանություն» մասնագիտություն, «Միջմշակութային հաղորդակցություն (անգլերեն)» բակալավրի կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի (Ֆ. Վերֆելի անվան կրթաթոշակ):
3. Բաղդասարյան Նարինե Մարատի -«Լեզվաբանություն» մասնագիտություն, «Անգլերեն լեզու և իսպաներեն լեզու և հաղորդակցություն» բակալավրի կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի (Հ. Աճառյանի անվան կրթաթոշակ):

ԵԼՀ ֆակուլտետի դեկանը անդրադարձավ օրակարգի երկրորդ հարցին՝ ֆակուլտետի գիտխորհրդի 2024-2025 ուստարվա աշխատանքային պլանի հաստատմանը: Գիտխորհրդի անդամները ծանոթացան 2024-2025 ուստարվա աշխատանքային պլանի բովանդակությանը և միաձայն քվեարկությամբ հաստատեցին այն:

**Ընթացիկ հարցեր**

ՄԻԱՁԱՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԵՑ.

- Դասընթացի բաղադրիչների (2 *ընթացիկ քննություն, ինքնուրույն աշխատանք, ընթացիկ ստուգում, մասնակցություն, եզրափակիչ քննություն*) առավելագույն միավորների սանդղակում մասնակցությանը հատկացվող 2 միավորը ամբողջությամբ հատկացնել ուսանողի ներկայությանը:
- Երաշխավորել Արտասահմանյան գրականության ամբիոնի հայցորդ Լուսինե Հովիկի Ջանինյանին ատեստավորման (Ժ. 01. 07. «Արտասահմանյան գրականություն» մասնագիտություն): Որոշումն ընդունվեց միաձայն:
- Դրական գնահատելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Մարինե Ալբերտի Էվոյանին (Ժ. 02. 07. «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտություն):
- Դրական գնահատելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի ասպիրանտ Անուշ Թաթուլի Մովսիսյանին (Ժ. 02. 07. «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտություն):
- Դրական գնահատելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Սրբուհի Տիգրանի Մինասյանին (Ժ. 02. 07. «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտություն):
- Դրական գնահատելով Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Վարդուհի Արթուրի Ղուկասյանի կատարած աշխատանքը՝ ատեստավորել նրան (Ժ. 02. 07. «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտություն):
- Դրական գնահատելով Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Անի Արամի Պետրոսյանի կատարած աշխատանքը՝ ատեստավորել նրան (Ժ. 02. 07. «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտություն):

ԵԼՀ ֆակուլտետի
դեկան և գիտխորհրդի նախագահ,
բ.գ.թ., դոցենտ՝ Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Գ. Դալալյան